ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ 1947, № 8 Общественные науки

Գ. Մելյան

ՍՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՎԱՂ ՇՐՋԱՆԻ ՄԱՐՔՍԻՍՏԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մարքս-լենինյան իդեաների արագ տարածումը Անդրկովկասում, ընկեր Ստալինի հիմնադրած մարքս-լենինյան ուղղության խմբակների գոյությունը և մարքսիստական պրոպագանդայի ծավալումը՝ իրենց որոշիչ ազդեցությունը թողեցին Ստեփան Շահումյանի վրա։

Անցյալ դարի 90-ական թվականների երկրորդ կեսից Թբիլիսին հանդիսացավ Անդրկովկասի քաղաքական հոսանքների կենտրոնը։

Շահումյան պատանին, որը 1896—1897 թ.թ. ռեալական դպրոցի նախավերջին դասարանի աշակերտ էր, ակտիվ մասնակցություն ունեցավ քաղաքական-հասարակական կյանքին։ Ռեալական դպրոցի աշակերտությունը, նրա ղեկավարությամբ, հիմնեց ռևոլյուցիոն-դեմոկրատական «Միածան» աշակերտական կազմակերպությունը իր «Միածան» խմորատիպ թերթով, որի խմբագիրը հանդիսացավ ինքը՝ Շահումյանը։

Ռեալական դպրոցը դուրս չմնաց հասարակական հոսանքների ազդեցությունից։ Երիտասարդության մեջ տարածված էին ամեն տեսակի ազատագրական, ինչպես նարոդնիկական-ազգայնական, այնպես և մարքսիստական-ինտերնացիոնալիստական գաղափարները։ Դպրոցի եզվիտական ռեժիմի պայմաններում սովորող 16-ամյա սրամիտ և զգոն պատանի Շահումյանը սկսում է ճանաչել Անդրկովկասի իրականությունը, ժողովրդի կեղեքվածությունը, և նրա մեջ արթնանում է ատելություն դեպի տիրող կարգերը, աճում է բողոքի և ըմբոստացման զգացմունքը։ Նրա ղեկավարած «Միածան» միության գլխավոր խնդիրներից մեկն էր հայ ժողովրդի իրավական ազատության համար մղվող պայքարը։ Շահումյանի և նրա ղեկավարած «Միածան» միության վրա ուժեղ ազդեցություն ունեցան ռուս ռևոլյուցիոն դեմոկրատների գաղափարները։ Հայ հասարակական-նացիոնալիստական հոսանքները՝ «մշակականները», «նոր-դարականները», «մեղուականները», «հորիզոնականները» և այլն, չեն հմայել պատանի Շահումյանին։ Նրա ազգային-դեմոկրատական սկզբնական հայացքները զուգորդվել են ռուս ռևոլյուցիոն դեմոկրատների հայացքներին։ Պատանի Շահումյանը խորը կերպով ուսումնասիրում է Գերցենի, Բելինսկու, Դոբրոլյուբովի, Չերնիշևսկու հայացքները։ Միքայել Նալբանդյանը, Պիսարևը և Բելինսկին Շահումյանի ամենասիրելի հեղինակներն են եղել։ Եվ պատահականություն չէր բոլորովին, որ այդ հեղինակների ազդեցությունը կրող Շահումյանը 16 տարեկան հասակից հակում է ունեցել դեպի հասարակական գիտությունները։ «Միածան» միությունում Շահումյանը հանդես էր գալիս զեկուցումներով, պատմական թեմատիկայով, որտեղ և դրսևորում էր իր դեմոկրատական-մատերիալիստական հայացքները։ Այսպես՝ 1897 թ. Շահումյանը զեկուցում է կարդում «Կյանքը և կենցաղը հին Հայաստանում»

թեմայով։ Մեր անվանի գրող Արազին պատմում է. «Շահումյանը միության հերթական պարապմունքում կարդաց դեկուցում՝ «Կյանքը հին Հայաստանում». այդ դեկուցումով նա դրսևորեց իր հասարակական գործիչ լինելու բոլոր ընդունակությունները»։ Ստեփանը խորը վերլուծման ենթարկեց ժողովուրդների կյանքի ու կենցաղի զարգացման էտապները։ Նա իր դեկուցման մեջ նշեց մոտավորապես հետևյալ միտքը, որ ժողովուրդների կյանքում, պատմական զարգացման ընթացքում տեղի են ունեցել զգալի փոփոխություններ, և մեծ բեկումներ կլինեն հետագայում ևս։ Հայ ժողովուրդը պատմության զարգացման ընթացքով կստեղծի իր կուլտուրան,— նոր եղանակով կվերակառուցի իր կենցաղը։ Հայ ժողովրդի առաջընթացը պայմանավորված է իր շրջապատով. նա կղզիացած չէ, նրան չի կարելի դիտել ինքնամփոփ. իր շրջապատից դուրս կգա ժամանակ, որ հայ ժողովուրդը կանգնած կլինի առաջավոր ժողովուրդների շարքերում»։[1]

Սակայն այս դեռ մարքսիստական տեսակետից չէր ասվում, նա դեռ մարքսիստ չէր և անգամ ծանոթ չէր մարքսիստական գրականությանը։

Ստեփան Շահումյանը միանգամից չէր, որ եկել էր դեպի մարքսիզմը։ Նա որոնում էր ճշմարտությունը, և գաղափարները նրան ընդգրկում էին խուռան հորձանքով, նրա մեջ դեռ իշխում էր մտքերի, հայացքների պայքարը։

Շահումյանը, սկսած 1894—95 թ.թ., ուսումնասիրում է ոչ միայն ռուս դեմոկրատիային, այլև եվրոպական գիտնականների գործերը։ Մեզ հայտնի է նրա ուսումնասիրած և կարդացած գրականությունը։ Նա կարդացել է գերմանական կլասիկ փիլիսոփաներին, ֆրանսիական մատերիալիստներին (1897 թ.), ռուս կլասիկ գրականությունը, եվրոպական գրականությունից և այլն (1894—95 թ.թ.)։ Նրա մոտ հանդիպում են հակասական հայացքների խառնուրդներով լի արտահայտություններ։ Կարդալով Հեգելին, նա յուրացնում է դիալեկտիկական գաղափարներ՝ իդեալիստական խառնուրդով, ընդունելով կյանքի դիալեկտիկական զարգացումը, Շահումյանը նրա մեջ տեսնում է ինչ-որ գերբնական և անհասկանալի ուժի ազդեցությունը՝

Կարդալով Ֆոյերբախին, Դիդրոյին և Գերցենին, Ստեփանը կանգնում է մատերիալիզմի տեսակետի վրա, ընդունում է նյութի և երևույթների օբյեկտիվ գոյությունը։ Կարդալով Չերնիշևսկուն և Բելինսկուն, տեսնում է ռուս ժողովրդի ազատագրական պայքարի պատմական անհրաժեշտությունը և նրա անխուսափելի հաղթանակը։ Կարդացած գրականության ազդեցության հետևանքով Շահումյանը «անքնանում է», «կորցնում է իր հանգիստը», ինչպես ինքն է արտահայտվում իր նամակներից մեկում։ 1897 թ. մայիսին գրած մի բարեկամին նամակում Շահումյանը հետևյալ կերպ է բնորոշում իր դրությունը. «...Երևակայեցեք, արդեն ես անքնացել եմ, անդադար մի միտք եմ անում, տանջվում և մտածում, թե ինչ բան է մարդկային և ընդհանրապես կյանքը։ Այդ մասին կարդացել եմ շատ գրքեր, շատ փիլիսոփաների, և իմ կարծիքով նրանք բոլորն էլ մեկը մյուսին հակասական բաներ են ասում։ ... Ինքս ինձ վրա դիտողություն անելով, աշխատում եմ հասկանալ՝ ի՞նչ բան է մարդը և այն դժվարին մեխանիզմը, որը կոչվում է «կյանք». ինձ թվում է, որ աշխարհս բոլոր

[1] ՀԿ(բ) Պ ԿԿ կից Պարտ. Արխիվ, Շահումյանի ֆոնդ, № 7, գ. № 9

գիտություններից ամենանշանավորը, ամենագլխավորը մարդկային ճանաչողության մեջ—դա ինքն իրեն ճանաչումն է։ Իսկ հետագա մի այլ նամակում, անդրադառնալով նույն հարցին (որը «այնքան ցավ ու վիշտ էր պատճառել և անքնացրել էր իրենս») և կարծես թե լուծելով հարցը, Շահումյանը գրում էր. «Կարդալով մի շարք նոր գրքեր և իմ անձնական դատողությունից ելնելով, գտնում եմ, որ մարդս, իմ կարծիքով, երկրագնդի անթիվ օրգանական արտադրություններից մեկն է։ ... Նա մի պարզ գիտակցություն է բերում իր հետ, այն է, որ յուր օրգանական գոյությունը պահպանելու համար, յուր կյանքը շարունակելու համար, հարկավոր է ունենալ սնունդ, հագուստ և այլն. ուրեմն այդ ձեռք բերելու համար հարկավոր է պայքար տանել։ Ուրեմն, միակ կռիվը, բոլոր օրգանիզմների մեջ (նույնպես և մարդու) «գոյության կռիվն է»։ Կանգնելով այս հայացքի վրա, ես ասում եմ, որ աշխարհի բոլոր փիլիսոփայություններն իրենց անթիվ ճյուղավորություններով, բոլոր կրոնները իրենց տեսակ-տեսակ աստվածներով, դրախտներով ու դժոխքներով՝ ծառայում են միայն և միայն մի բանի, այն է՝ «գոյության կռվին»։[1]

Այդ տարերային խառնաշփոթ հասկացողությունների մեջ պատանի Շահումյանի մոտ աղոտ կերպով արտահայտվում են մատերիալիստական որոշ ըմբռնումներ։ Օրինակ՝ նա գտնում է, որ «գոյության կռիվը» մարդկային կյանքի նյութական պայմանների արտադրության, հայթայթման համար մղվող պայքար է։ «Փիլիսոփայություններն իրենց անթիվ ճյուղավորություններով, կրոններն իրենց դրախտներով ու դժոխքներով և այլն, բոլորը գոյության կռիվ է»։

Շահումյանը դեռ ծանոթ չէր մարքսիզմին, ոչ պակաս կարողանար գիտական-մատերիալիստական վերլուծման ենթարկել իր առաջադրած ընդհանուր մտքերը. նա չգիտեր, որ հասարակական կյանքում «գոյության կռիվը» արտահայտվում է դասակարգային պայքարի մեջ, որ մարդկային հասարակակարգը վաղուց արդեն բաժանված է դասակարգերի ու բոլոր գիտությունները, կրոնները իրենց պեսպեսությամբ ու աստվածներով, բոլոր փիլիսոփայություններն իրենց ճյուղավորություններով արտահայտում են և ծառայում հասարակության այս կամ այն դասակարգերի շահերին։ Շահումյանը, հետագայում միայն (1899 թ.) ուղղելով իր 1897 թ. «գոյության կռվի» հարցադրումը, բացատրում է այդ «կռվի» դասակարգային ու պարտիական լինելու հանգամանքը։

Շահումյանի՝ «գոյության կռվի» հասկացողությունը կապված էր նաև այն բանի հետ, որ նա ուսումնասիրելով Դարվինին, գտնվում էր նրա ուսմունքի ազդեցության տակ, կանգնելով սոցիալ-դարվինիստական տեսակետների վրա։ Սակայն մարդկային և հասարակական կյանքի վերաբերյալ նրա այդ կարգի տարերային ըմբռնումներն իրենց տեղը շուտով զիջում են գիտական հիմնավորում ստացած հայացքներին։

1898 թվին հանդիսանում է Շահումյանի հասարակական հայացքների բեկման տարի։ Նա մատերիալիստական-իդեալիստական խառնիճաղանճ ըմբռնումից անցում է կատարում դեպի հրեությունների մատերիալիստական

[1] Տարբ. Արխիվ, ֆոնդ № 7, գործ № [illegible]
[2] Նույն տեղում, էջ 10—11։

ըմբռնումը, ազգային դեմոկրատիզմից դեպի ռևոլուցիոն ինտերնացիոնալ քաղաքական պայքարը։ Այդ տարիներին Շահումյանը կապվում է արդեն վրացական դեմոկրատական հոսանքների հետ։ Նա ձեռք է բերում ռուսական «Мир божий», «Научное обозрение» լիբերալ ամսագրերը և այլ գրականություն, որտեղ լույս են տեսնում Վ. Ի. Լենինի, Պլեխանովի հոդվածները, որոնց շնորհիվ Շահումյանը կողմնորոշվում և դառնում է ռևոլուցիոն-դեմոկրատ։ Հատկապես նշանակալից է 1899 թիվը։ Այդ թիվը Շահումյանի, որպես մարքսիստի հասարակական հայացքների ձևավորման գործում նշանակալից դեր կատարեց։ 1899 թ. «Научное обозрение» ամսագրում լույս տեսան Լենինի «К вопросу о теории рынков» և «Еще к вопросу о теории реализации», «Некритическая критика» և այլ հոդվածները։ Իսկ «Мир божий» ամսագրում լույս տեսավ Լենինի «Տնտեսական գիտության համառոտ դասընթացի մասին» գրախոսական հոդվածը։ Ստեփան Շահումյանի մարքսիստական հայացքների կողմնորոշման գործում Լենինի այդ հոդվածները զգալի նշանակություն ունեցան։ Բացի դրանից, Շահումյանը նույն ժամանակաշրջանում ծանոթանում է Պլեխանովի «Պատմության նկատմամբ մոնիստական հայացքի զարգացման հարցի շուրջը», «Մեր տարաձայնությունները» և այլ աշխատություններին։

Մեզ հասած տեղեկություններից երևում է, որ Շահումյանը 1898 թ. կապեր է հաստատում վրաց մարքսիստական խմբակների հետ և նրանցից ստանում մարքսիստական արգելված գրականություն։ Նրա դպրոցական ընկերներն իրենց հիշողություններում գրում են, որ Շահումյանը հաճախակի բացակայում էր դասերից, օրերով դպրոցում չէր երևում։ Նա դարձել էր ավելի լուրջ։ Շատ կարդում էր արգելված գրականություն և կարդացածի բովանդակությունը հակիրճ պատմում իր մոտիկ ընկերներին։ Շահումյանը 1898 թ. արդեն ձեռնարկում է մարքսիստական գրականության լուրջ ուսումնասիրության, նույն թվին նա կարդում է Մարքսի «Կապիտալ»-ը, «Կոմունիստական մանիֆեստ»-ը և Մարքսի ու Էնգելսի այլ աշխատություններ։ «Կոմունիստական մանիֆեստ»-ը, «Վարձու աշխատանք և կապիտալ» աշխատությունները Շահումյանը թարգմանում է հայերեն, որոնք լույս են տեսնում 1906 թ.։

Շահումյանի ուղին և ապագա գործունեության ասպարեզն արդեն ընտրված էր։ 1899 թվին նա լուրջ կերպով ուսումնասիրում է Լենինի «Բանվոր դասակարգի պայքարի և ազատագրման Պետերբուրգի միության» ծրագիրը, 1900 թ. ուսումնասիրում է «Կապիտալիզմի կարգացումը Ռուսաստանում» և «Ինչ են ժողովրդի բարեկամները» աշխատությունները։ Նա լուրջ կերպով ձեռնարկում է եվրոպական սոցիալ-դեմոկրատական շարժման պատմության ուսումնասիրությանը։

Բացի այդ, նա կարդում է նաև հակամարքսիստական ուղղության գրականություն, ինչպես, օրինակ, Զոմբարտին, Կովալևսկուն, Բիդեշորին և այլոց, որոնց ենթարկում է խիստ քննադատության։ Եթե 1898—1899 թվականներին Շահումյանը սոսկ միայն ուսումնասիրող էր, ապա 1899—1900-ական թվերին նա, մարքսիստական տեսանկյունից ելնելով, խիստ քննադատության է ենթարկում հակամարքսիստական, ոեֆորմիստական, բուրժուական կոնցեպցիաները։

Լենինի դիրքերից՝ Շահումյանը խիստ քննադատում է տնտեսագետ Կովալևսկուն, նրան համարում է «տնտեսական վուլգար մատերիալիստ», պատմական մատերիալիզմին անգիտակ գիտնական և այլն։

Հայտնի է, որ Կովալևսկին նարոդնիկությանը մոտենում էր սուբյեկտիվ սոցիոլոգիայի տեսակետից, 90-ական թ.թ. նարոդնիկներին համարում էր «առաջադեմ» և այլն։ Ահա, Ստեփան Շահումյանը, որը արդեն ծանոթ էր Լենինյան գնահատականին նարոդնիկության նկատմամբ, Լենինյան դիրքերից հանդես է գալիս Կովալևսկու դեմ։ Նա նարոդնիկությունը բաժանում է երկու էտապի՝ 70—80-ական թ.թ. և 90-ական թ.թ. նարոդնիկների։ 70—80-ական թ.թ. նարոդնիկությանմեջ Շահումյանը տեսնում է և՛ ռևոլուցիոն և՛ հետադիմական կողմեր։ «70—80 թ.թ. նորոդնիկությունը,—ասում է Շահումյանը իր կոնսպեկտում,—մի դրական կողմ ուներ, դա նրանց հերոսական ու անառաչ պայքարն էր ճորտատիրության դեմ։ Այդ անվեհեր մարտիկները, այդ պայքարում նույնպես սխալ գործեցին։ —Մասսան նրանց մոտ թերագնահատվեց, իսկ անհատը գերագնահատվեց։ Փոխանակ միավորելու ժողովրդին, կազմակերպելու նրան ընդդեմ բռնակալության, նրանք ընկան անհատական տեռորների գիրկը, որով և կործանեցին իրենց»։

Խոսելով նարոդնիկության հասարակական հայացքների մասին, Շահումյանն ընդգծում է, որ նարոդնիկները մանր-բուրժուական ուտոպիստներ էին։ «...Նարոդնիկները դեմ լինելով խոշոր կապիտալիստական տնտեսությանը Ռուսաստանում, պաշտպանում էին մանր-արհեստավորական տնտեսության միջոցով անցումը դեպի սոցիալիզմ։ Այդ սոցիալիզմ չէր. չի կարելի սոցիալիզմը պատկերացնել բրուտագործական արտադրության ցածր տեխնիկայով։ Կապիտալիստական տնտեսության առավելությունն այն է, որ նա ստեղծում է տեխնիկա, արտադրական նոր հարաբերություններ, և վերջապես մի դասակարգ (բանվոր դասակարգ), որը պիտի լինի նոր հասարակակարգի շարժիչ ուժը։ Նարոդնիկությունը հետամնաց հայացքների հոսանք էր. նա չէր կարողանում հասկանալ հասարակական կյանքում կատարվող տեղաշարժերի բուն իսկ իմաստը։ Չըմբռնելով պատմական զարգացման ընթացքը, նարոդնիկները թերագնահատեցին նոր, առաջավոր հասարակական այնպիսի ուժի նշանակությունը, ինչպիսին էր պրոլետարիատը»։[2]

Նարոդնիկությունը սոցիալիզմի գաղափարը և իրականացումը կապում էր ոչ թե պրոլետարիատի հետ, որը միակ առաջավոր ուժն է, այլ գյուղացիական քայքայվող համայնքների հետ, մի համայնք, որը պատմականորեն գնում էր դեպի իր կործանումը։ Շահումյանը նարոդնիկության մասին գրել է 1899 թվին, երբվանից և նա սկսել է հետևել Լենինի տեսակետներին։ Արդեն «գոյության պայքարի» հասկացողությունը Շահումյանի մոտ փոխվում է դասակարգային պայքարի ըմբռնողության, իսկ «ինքնաճանաչողությունը»՝ հասարակական երևույթների դիալեկտիկական զարգացման—մաքսիստական իմացության։

Ստեփան Շահումյանի մաքսիստական հայացքներն ավելի ընդարձակվում և ավելի հետևողական են դառնում այն ժամանակ, երբ նա մոտի-

---

[1] Պարտ. արխիվ, ֆ. № 7, գ. № 13, թերթ 3։
[2] Նույն տեղում։

կից կապ է հաստատում ռուսական ռևոլուցիոն միջավայրի հետ։ Ռիգան, որտեղ նա ուսանում էր, իր պրոլետարական ռևոլուցիոն միջավայրով այն քաղաքն էր, որտեղ ռևոլուցիոն մկրտություն ստացավ Շահումյանը։ Նա ներգրավվում է բանվորական սոցիալ-դեմոկրատական շարժման մեջ, տանում է պրոպագանդիստական աշխատանք։ Շուտով Շահումյանը դառնում է Ռիգայի սոցիալ-դեմոկրատական ակտիվ գործիչներից մեկը։ Շահումյանն այնտեղ բանվորական խմբակներում, ուսանողության մեջ տանում է մարքսիստական պրոպագանդա, որի համար էլ արտաքսվում է ինստիտուտից որպես «քաղաքականապես անբարեհույս տարր»։

Ռիգայում Շահումյանը ձեռնարկում է մարքսիզմի ավելի խորը ուսումնասիրությանը։ Նա կարդում և կոնսպեկտավորում է «Կապիտալը» (1899 թ.), «Կոմունիստական մանիֆեստը», Էնգելսի «Բանվոր դասակարգի դրությունը Անգլիայում», Լենինի «Ի՞նչ են ժողովրդի բարեկամները...», Պլեխանովի մի շարք աշխատությունները և այլն։

Մարքսիզմի կլասիկների ուսումնասիրումը և ռևոլուցիոն շարժումների պրակտիկան Շահումյանին դարձնում են պատրաստված ու համոզված մարքսիստ։ Շահումյանն իր կոնսպեկտներում այն միտքն է հայտնում, թե Ռուսաստանի քաղաքական կյանքում կատարվող իրադարձությունները ռուսական պրոլետարիատին կկանգնեցնեն ռևոլուցիայի առաջավոր շարքում, որ սոցիալիստական ռևոլուցիայի հաղթանակի շանսերն ավելի շատ են Ռուսաստանում, քան զարգացած կապիտալիստական Եվրոպայում։ Այդ կարգի դատողություններ գտնում ենք Շահումյանի համարյա բոլոր ձեռագիր կոնսպեկտներում, որոնք նա կազմել է 1899—1900 թ.թ. ընթացքում։ Ստեփան Շահումյանի անտիպ կոնսպեկտները մեզ հետաքրքրում են երկու առումով։ Նախ՝ դրանք ցույց են տալիս նրա մարքսիստական հայացքների ձևավորումը, երկրորդ՝ այդ կոնսպեկտներում մարքս-լենինյան տեսակետից քննադատվում են բուրժուական և մանր-բուրժուական գաղափարախոսությունները։

Շահումյանը 1899 թ. կարդում է գերմանական սոցիոլոգ Զոմբարտի «Սոցիալական շարժումը 19-րդ դարում» աշխատությունը։ Զոմբարտն իրեն ներկայացնում է որպես «մարքսիստ», «սոցիալիստ», սակայն ինչ այդ «սոցիալիստական» քողի տակ նա ջանում է մարքսիզմը հարմարեցնել բուրժուական իդեոլոգիային։ 19-րդ դարի սոցիալական շարժումները ընութագրելիս նա ջատագովում և հավերժացնում է կապիտալիզմը։ Նա չի խոսում այն ռեակցիոն դերի մասին, որ կապիտալիզմը կատարում էր 19-րդ դարի երկրորդ կեսին։ Ահա Շահումյանը, սկսնակ այդ մարքսիստը, սուր քննադատության է ենթարկում բուրժուական սոցիոլոգներին և դրսևորում է մարքս-լենինյան մտածողի իր տաղանդը։ Շահումյանը հանդես է գալիս թեորիական լուրջ պրոբլեմներով։ Նա հատուկ ընդգծում է իր կոնսպեկտում այնպիսի լուրջ խնդիրներ, ինչպիսին են՝ պրոլետարիատի պատմական տեղը 19-20-րդ դարերում, պրոլետարական դիկտատուրայի, պրոլետարիատի և բուրժուազիայի փոխհարաբերության, պրոլետարիատի և գյուղացիության փոխհարաբերության հարցերը։ Հատուկ գլուխ է նվիրում մարքսիզմի ուսմունքի պատմական ու գիտական նշանակությանը։

Շահումյանը մեղադրում է Զոմբարտին և մյուս ռեֆորմիստներին ու

ռեվիզիոնիստներին, որոնք, ըստ Շահումյանի, «մեծ աղեա են մարքսիզմի մեջ։ Ի հակադրություն Զոմբարտի, Շահումյանը պնդում է, թե 19-րդ դարի երկրորդ կեսի շարժիչ ուժը հանդիսանում է ոչ թե բուրժուազիան, այլ պրոլետարիատը։ «Բուրժուազիան առաջավոր ուժ լինելուց գաղարեա այն ժամանակ, երբ նա ստեղծեց իր պետական ապարատը, երբ ֆեոդալական շահագործման եղանակը փոխվեց նոր կապիտալիստական «ցիվիլիզացված» ստրկությամբ։ Կապիտալիզմը ստեղծելով նոր ուժը՝ պրոլետարիատին, դադարեց հասարակական զարգացման շարժիչ ուժը ե առաջադեմ դասակարգը լինելուց։ Հարցը քննելով պատմականորեն, Շահումյանը չի ժխտում կապիտալիզմի առաջավոր նշանակությունը նրա զարգացման սկզբնական շրջանում, բայց նա քննադատում է բուրժուականացող «սոցիալիստին» այն բանում, թե բոլոր էտապներում կապիտալիզմը դեկավար-ստեղծագործողի դեր է կատարում և հանդիսանում է հավերժական հասարակակարգ։ Շահումյանն իր կոնսպեկտում նշում է նաև մի շարք սոցիալ-դեմոկրատների (անունները նա չի տալիս), որոնք ջուր են ածում բուրժուական իդեոլոգների ջրաղացին, փառաբանելով կապիտալիզմը։ Շահումյանը գրում էր. «Զոմբարտը և նրա մի շարք սոցիալիստ համախոհները գովաբանելով կապիտալիզմը, աստվածացնում են նրան, ցույց են տալիս, որ նա ռևոլուցիոն դեր է կատարել ֆեոդալիզմի քայքայման ու տապալման գործում, նոր արտադրական հարաբերությունների ստեղծման գործում, սակայն աչքաթող են անում այն ռեակցիոն դերը, որ այսօր կապիտալիզմը կատարում է»։[1]

Շահումյանը հատկապես ընդգծում է այն հանգամանքը, որ կապիտալիստական հասարակակարգում դասակարգային հակասությունները գնալով ավելի սուր բնույթ են ստանում, և այդ հակասությունները արտահայտվելով բանվորական շարժումների մեջ, թուլացնում են կապիտալիզմը ե հող ստեղծում նրա խորտակման համար։ Ինչպես բուրժուական իդեոլոգները, այնպես էլ այդ իդեոլոգիայի կույր գործիք դարձած սոցիալ-օպորտունիստները, գովաբանելով կապիտալիզմը, ժխտում էին մարքսյան տեսությունը կապիտալիզմի անխուսափելի խորտակման մասին։ Երիտասարդ մարքսիստ Շահումյանը մերկացնում է կապիտալիզմի հավերժացման բուրժուական «տեսությունը» որպես ռեակցիոն և հակագիտական «տեսություն», նշելով, որ այն որպես կապիտալիզմի բուրժուական իդեոլոգիա, տրամագծորեն հակադիր է մարքսյան ուսմունքին։ Շահումյանը ցույց է տալիս, որ «մի շարք «սոցիալիստներ» իրենց տեսություններով նույնանում են բուրժուական գաղափարախոսների հետ, որ նրանք չեն ընդունում մարքսյան պատմական մատերիալիզմը, մարքսյան ուսմունքը հասարակության օրինաչափությունների մասին. նրանք չեն ընդունում, որ պատմական զարգացման օբեկտիվ ընթացքով, հասարակական տնտեսական-քաղաքական ֆորմացիաները ենթակա են փոփոխման։ Եթե ֆեոդալիզմը իր տեղը զիջեց կապիտալիստական հարաբերություններին, ապա նույն կարգով կապիտալիզմը պետք է իր տեղը զիջի սոցիալիստական հասարակակարգին»։[2]

---

1 Գարա. Արխիվ, ֆ. № 7, գործ № 2, էջ 5—6.
2 Նույն տեղում էջ 6։

Շահումյանը գտնում է, որ «Կապիտալիստական կարգերի խորտակող գլխավոր ուժը պրոլետարիատն է»[1]

Շահումյանը լուրջ կեպով ուսումնասիրում է մարքսյան պատմական մատերիալիզմը։ Նրա կոնսպեկտներում մենք հանդիպում ենք մատերիալիստական սքանչելի դրույթների։ Խոսելով հասարակակարգերի ծագման ու նրանց զարգացման մասին, նա գտնում է, որ յուրաքանչյուր նոր հասարակակարգի ծնունդը տեղի է ունեցել հնի ընդերքում և անընդհատ բախման մեջ է գտնվում նրա հետ։

Շահումյանը բազմաթիվ օրինակներ է բերում ապացուցելու իր հաստատումը. «Նոր հասարակական, նոր արտադրական հարաբերությունները,—ասում է նա,—սկզբում առաջանում են տարերայնորեն և հետո միայն անցնում են կազմակերպված դրության, նորը առաջանալով խիստ ու հաստատ պայքար է տանում հնի դեմ։ Հին հարաբերությունները մահու և կենաց պայքար են մղում, ջանում են ոչնչացնել նորը։ Սակայն պատմության դիալեկտիկան այդպիսին է՝ որքան էլ նորը թույլ է, բայց ապագան նրանն է, նա է հաղթանակողը։ Որքան էլ հինը այսօր ուժեղ է, դա միևնույն է, պատմականորեն նա մատնված է կործանման»[2]

Այդ ապացուցելու համար Շահումյանը պատմական գիտությունից բազմաթիվ օրինակներ է բերում։ Հատկապես նա վերցնում է ֆեոդալական և կապիտալիստական հասարակությունների ծագման և պայքարի հարցը։ «Երբ ֆեոդալիզմը ծնունդ էր առնում ստրկական հասարակության ծոցում, նա մի շարք հաստատ պատերազմներ տարավ և իր պրոպագանդայով իր շուրջն էր համախմբում ժողովրդական մասսաներին՝ ստրուկներին ընդդեմ ստրկատերերի, անշուշտ այդ օրինական էր և դրական։ Նույնքան օրինական էր և դրական ավելի առաջավոր կապիտալիզմի ծնունդն ու հաղթանակը ֆեոդալիզմի նկատմամբ..., երբ կապիտալիստական հարաբերությունները ծնունդ էին առնում և դրսևորում էին իրենց ֆեոդալական հասարակակարգի ծոցում և պայքար էին տանում նրա դեմ, անկասկած, բուրժուազիան էր հանդիսանում շարժիչ փոկը։ Նա իր շուրջն էր համախմբում ճնշված մասսաներին, իր դրոշի տակ էր առնում նրանց, քանի որ մասսաները նույնպես շահագրգռված էին այդ հին, իրենց դարն ապրած անտեսական հետամնաց հարաբերությունների լիկվիդացիայով։ Կապիտալիզմը ժողովրդական մասսաների միջոցով խորտակեց ֆեոդալիզմը, սակայն այդ պայքարում էլ դարձյալ մասսաներն էին հասարակական շարժիչ ուժերը։ Այժմյան պայմաններում գլխավոր շարժիչ ուժը պրոլետարիատն է, որի միջոցով կապիտալիզմը անխուսափելիորեն պետք է խորտակվի»[3]

19-րդ դարի սոցիալական շարժումների մասին խոսելիս Շահումյանը գտնում է, որ այդ դարի առաջին կեսի ելման կետը կապիտալիստական կարգերն էին, որոնք հիմնված էին մասնավոր սեփականության և պրոլետարիատի շահագործման վրա։ Իսկ շարժման կրողը, շարժիչ ուժը պրոլետարիատն էր։[4]

---

[1] Նույն տեղում։
[2] Նույն ֆոնդ, տետր № 2, էջ 6։
[3] Նույն տեղում, էջ 6—7։
[4] Նույն տեղում։

«Սոցիալական շարժման (այսինքն՝ բանվորական շարժման) նպատակը կամ իդեալը՝ սոցիալիստական կարգերի հաստատումն է հանդիսանում, կարգեր, որտեղ տիրապետողը հանրային կոլեկտիվ սեփականությունը պետք է լինի, իսկ բանվոր դասակարգը՝ նրա կենսագործողը», — ասում է Շահումյանը 1900 թվին իր անտիպ կոնսպեկտում։

* * *

Ուսումնասիրելով երիտասարդ սկսնակ մարքսիստ Շահումյանի կոնսպեկտները, մենք տեսնում ենք, թե ինչպիսի զարմանալի արագությամբ է վերակառուցվել նա։ 1899 թ. ծանոթանալով Լենինի աշխատություններին, նա ամենայն վճռականությամբ կանգնում է մարքսիստական դիրքերի վրա։ Իսկ ռուսական ռեալությունը միջավայրը նրան դարձնում է մարքս-լենինյան անհաշտ ու անաչառ գործիչ։ Ջեռնամուխ լինելով մարքսիզմի կլասիկների ուսումնասիրությանը, նա հանդես է բերում մարքս-լենինյան տեսաբան լինելու իր ընդունակությունները։ Ծանոթանալով եվրոպական, ինչպես և ռուսական սոցիալ-դեմոկրատական շարժման պատմությանը, Շահումյանն ըմբոստանում է օպորտունիզմի և ռևիզիոնիզմի դեմ, պաշտպանելով մարքսիզմը միջազգային և տեղական օպորտունիզմից։ Նա պայքարում է մարքս-լենինյան ուսմունքի անաղարտության համար։ Նա դրանով մասսայականացնում էր այդ ուսմունքը։ Պետք է նշել, որ հատկապես հայ երիտասարդության մեջ մարքս-լենինյան գաղափարների մասսայականացման գործում Ստեփան Շահումյանը խոշոր դեր է խաղացել։ Նա էր, որ առաջին անգամ պատռեց հայ իրականության մեջ բուն դրած բուրժուա-նացիոնալիստական, կղերականության և պահպանողական նացիոնալիզմի քողը, նրա բերանով առաջին անգամ բացահայտ կերպով և հրապարակորեն հնչեց մարքսիզմի գիտական խոսքը հայ իրականության մեջ։ Հիշենք թեկուզ 1902 թ. մայիսի 19—ը՝ հայ մեծանուն բանաստեղծ և մանկավարժ Ղազարոս Աղայանի 40-ամյա հոբելյանը, որտեղ Շահումյանը հանդես եկավ իր փայլուն ճառով, որով և շարադրեց մարքսիստական ուսմունքի մի քանի գրույթներ և վերլուծեց հայ հասարակական հոսանքների բնույթը։

1901 թ. գրած իր կոնսպեկտներում Շահումյանը հատուկ նշանակություն է տալիս պրոլետարական-դասակարգային պայքարի և պրոլետարական դիկտատուրայի մարքսյան ուսմունքին։ Նա, քննադատության ենթարկելով բերնշտայնականությունը, մեղադրում է Բերնշտայնին և նրա գաղափարակիցներին մարքսիզմի ուսմունքի դավաճանության մեջ։ 1901 թ. նա գրում էր. «Կույր պետք է լինել չտեսնելու համար բանվոր դասակարգի այն ուժը, որը այսօր տապնապի մեջ է դրել ողջ բուրժուական հասարակակարգը։ ... Բուրժուազիան ստեղծեց մի դասակարգ, որին պատկանում է ապագան։ Մի դասակարգ, որը կոչված է պատմության կողմից, պատմության մեջ մեծ դեր կատարելու։ Կապիտալիզմը վայրագ կերպով ճնշում է բանվորական շարժումները, նրա միասնությունը, կապիտալիզմը գնալով ավելի ռեակցիոն է դառնում, ավելի կատաղի, ավելի է լայնանում նրա հափշտակողական ախորժակը։ Նա ձգտում է համաշխարհային տիրապետության։ Այդ պայմաններում պրոլետարիատի առաջ ծառանում են ավելի պատասխանատու և լուրջ խնդիրներ, այն է՝ ազատագրել ճնշված մարդ-

կությունը կազատագրվեր բուրժուազիությունից: Այդ կարող է կատարել միայն պրոլետարիատը:[1]

Խոսելով մարքսիստական ուսմունքի պատմական զարգացման հարցերի մասին, մարքսիզմի պատմական արմատների մասին, Շահումյանը նշում է երեք «տեսական» աղբյուրներ. նա ընդգծում է ֆրանսիական սոցիալիզմը, անգլիական քաղաքատնտեսության շկոլան և նախամարքսյան փիլիսոփայությունը: Այս բնորոշման մեջ Շահումյանը հետևում է Լենինին:

Առանձին-առանձին քննության առնելով մարքսիզմի զարգացման այդ երեք աղբյուրները, կանգ է առնում այդ հոսանքների բնութագրման վրա և նշում է նրանց դրական ու բացասական կողմերը հասարակական կյանքում:

Լենինը կլասիկ ձևով բացահայտեց մարքսիզմի ակունքները, տվեց մինչմարքսյան սոցիալիստական ուղղությունների բնութագիրը:

Շահումյանը տվյալ դեպքում տարածում էր լենինյան գաղափարները հատկապես հայ իրականության մեջ, դաստիարակում էր հայ մարքսիստների նոր կադրեր՝ Լենինի Ստալինի գաղափարներով:

Խոսելով ֆրանսիական սոցիալիզմի մասին, Շահումյանը ֆրանսիական սոցիալիստներին համարում է 19-րդ դարի «վուլգար ֆիլանթրոպներ». այդ այն բանի համար, որ նրանք տեսնում էին կապիտալիզմի արատները, պրոլետարական մասսաների անլուր շահագործումները և միայն կարեկցում էին այդ դրությանը, միայն երազում էին «բարի և հավասար համերաշխության»:

«Ֆրանսիական սոցիալիստները,— գրում էր Շահումյանը,— ձգտում էին ազատագրել աշխատանքը շահագործումից, սակայն այդ ազատագրումը, ըստ նրանց, պետք է լիներ շահագործողների և շահագործվողների փոխըմբռնմամբ: Նրանց պայքարն ուղղված էր չարիքների դեմ և ոչ այդ չարիքները ծնող պատճառների դեմ»:[2]

Շահումյանը գտնում է, որ ֆրանսիական սոցիալիզմի ներկայացուցիչներն անընդունակ էին հասկանալու դասակարգային տեղաշարժերը, նրանք չկարողացան տնտեսական բնամատերիալիզմից այն կողմն անցնել և տեսնել պատմական մատերիալիզմը: Ըստ Շահումյանի՝ դասակարգային պայքարի պատմությունը, պրոլետարիատի տեղը պատմության մեջ՝ ուտոպիստ սոցիալիստների կողմից թերագնահատվել էր:

Խոսելով անգլիական քաղաքատնտեսության շկոլայի մասին (Ա. Սմիթ, Դ. Ռիկարդո և ուրիշներ), Շահումյանն ընդգծում է այդ շկոլայի դրական կողմը այն բանում, որ նրանք մշակեցին կապիտալիզմի տնտեսական սիստեմի թեորիան, նշեցին երկու դասակարգերի առկայությունը և նրանց միջև եղած հակասությունները: «...Սեն-Սիմոնը և նրա գաղափարակիցները տվեցին արժեքի թեորիան, խոսեցին և այլ դրական բաների մասին, սակայն այդ թեորիաներում տիրում էր լիակատար քաոս»:[3]

Խոսելով սոցիալիստական ուղղությունների մասին, Շահումյանը դրանք բաժանում է երկու հոսանքի—ռևոլյուցիոն և ռեֆորմիստական: Ըստ

[1] Նույն տեղում, էջ 12:
[2] Պարտ. Արխիվ, ֆոնդ № 7, գործ № 12, տետր № 1, էջ 8:
[3] Նույն տեղում, տետր № 2, էջ 5:

Շահումյանի՝ ռեֆորմիստական հոսանքը ռևոլյուցիոն հոսանքից տարբերվում է նրանով, որ նրա ներկայացուցիչներն ընդունում էին միայն գոյություն ունեցող անհավասարությունը որպես անխուսափելի սոցիալական չարիք։

«Ռեֆորմիստները,— գրում էր Շահումյանը (1900 թ.),— դուրս լինելով կապիտալիստական կարգերին և մասնավոր սեփականությանը, պաշտպանում էին դասակարգերի միջև եղած հակասությունների կարգավորում ռեֆորմների միջոցով։ Դրանով նրանք քարոզում էին քրիստոնեական սոցիալիզմ, խաղաղություն դասակարգերի միջև (Լամենը Ֆրանսիայում, իսկ Կինգը Անգլիայում)։ Իսկ մյուս խումբը հակադրվում էր սրան և ազդկում հանուն սոցիալական ոգու Վերջիններիս լոզունգն էր փոխել մարդուն և նրա իսկական մտածելակերպը մարդասիրության և սիրո ուժի միջոցով»[1]։

Ռեֆորմիստական բոլոր ուղղությունները երբեք չեն խոսում սոցիալական հարաբերությունների փոփոխման մասին, այլ ջանում են մարդկանց հոգեբանությունը հարմարեցնել տիրող պայմաններին։ Նրանք հաշվի չեն առնում, որ մարդկանց մտածողությունը, հոգեբանությունը—դասակարգային է և բխում է նյութական պայմանների տարբերություններից»։

«Օուենի և այլ մտածողների սիստեմն ունի կարևոր նշանակություն նա իր մեջ ընդհանուր գծերով կրում է այն, ինչ որ հետագայում դառնում է պրոլետարիատի իդեալը։ Օուենը և նրա հետևորդները սոցիալիստներ են նրա համար, որ նրանց ելման կետը հանդիսանում է գոյություն ունեցող կարգերի քննադատությունը պրոլետարիատի շահերից և նրա տեսակետից. և նրա համար, որ նրանք կողմնակից են հանրային սեփականությանը։

Նրանք ուտոպիստներ են, որովհետև չէին հասկանում սոցիալական կյանքում տիրապետող ռեալ ֆակտորները, չէին հասկանում հասարակության պատմական զարգացման օրենքները և միևնույն ժամանակ մարդկանց՝ դասակարգերի բաժանված լինելը, դասակարգային պայքարի անխուսափելիության փաստը և այլն»[2]։

Տալով ուտոպիստական-սոցիալիստական հոսանքների այդ գնահատականը, Շահումյանը, այնուամենայնիվ, նշում է, որ մարքսիզմն անեց ու զարգացավ 19-րդ դարի մարդկության լավագույն մտածողների ժառանգությունների լայն օգտագործման հիման վրա։

Շահումյանը նշում է, որ մարքսիզմը քննադատորեն է մոտեցել և օգտագործել թե ֆրանսիական և թե անգլիական սոցիալիստների թողած ժառանգությունները։ «Մարքսյան ուսմունքի ռևոլյուցիոն նշանակությունն այն է, որ նա հայտնագործեց հասարակական հարաբերությունների պատմական մատերիալիստական ըմբռնումը։ Մարքսը ցույց տվեց, որ ամբողջ մարդկության ու հասարակությունների անցած ուղին ու պատմությունը եղել է դասակարգային պայքարի պատմություն, Մարքսի ծառայությունն այն է, որ նա վեր հանեց պրոլետարիատի ռևոլյուցիոն պատմական դերը կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու շրջանում»։

Շարադրելով մարքսյան ուսմունքի գիտական ռևոլյուցիոն նշանակու-

---

[1] Նույն տեղում, ֆոնդ № 7, ստոր № 2, էջ 7։
[2] Նույն ֆոնդ, № 7, ստոր № 2, էջ 7։
[3] Նույն տեղում, էջ 16։

թյունը, Շահումյանը գրում էր. «Մարքսը ցույց տվեց (հակառակ ուտոպիստների), որ պրոլետարիատը ապագա հասարակության նովատորն է, նա ցույց տվեց, որ բուրժուական հասարակակարգը, համաձայնելով և խաղաղությամբ իր դիրքերը չի զիջելու մի ուրիշին։ Այդ դեպքում պետք է դիմել կազմակերպված դասակարգային պայքարի և գրավել իշխանությունը, խորտակելով բուրժուական պետական մեքենան»[1]։

Այդպիսով, վերլուծելով 19-րդ դարի սոցիալական շարժումների պատմությունը, Շահումյանը վեր է հանում մարքսիզմի ուսմունքի ռևոլյուցիոն գիտական նշանակությունը, հայտարարելով, որ «Մարքսիզմը բոլոր գիտությունների գիտությունն է»։ Մարքսիստական գիտական սոցիալիզմի ուսմունքը հակադրելով մանր-բուրժուական ուտոպիստների, բուրժուական իդեոլոգիայի այլ և այլ արտահայտություններին, Շահումյանը գտնում է, որ միայն Մարքսին վիճակվեց գիտականորեն վեր հանել մարդկային հասարակակարգի զարգացման պատմա-մատերիալիստական բուն իմաստը և ճիշտ կողմնորոշում տալ ապագայի նկատմամբ։

Շահումյանը նշում է, որ Մարքսը կապիտալիստական հասարակակարգը անատոմիական վերլուծման ենթարկելով, վեր հանեց մարդկային հասարակության անցած ողջ պատմական զարգացման ու փոփոխման պատմությունը և դրանով հիմնավորեց, որ «կապիտալիստական հասարակակարգը (ինչպես մարդկության մյուս հասարակակարգերը) անփոփոխական չեն և այդպիսին լինել չեն կարող։ Պատմական օրինաչափությունների հիման վրա, կապիտալիզմը պետք է իր տեղը զիջի նոր՝ սոցիալիստական-կոմունիստական հասարակակարգին» և այդ նոր հասարակակարգի կերտողը պրոլետարիատն է հանդիսանալու։

Շահումյանի կարծիքով՝ Մարքսի ուսմունքի գլխավոր արժանիքը, մյուս կողմից, այն է, որ նա տվեց կոմունիստական հասարակության գիտական բնորոշումը։

«Մարքսյան սոցիալական գաղափարախոսության և շարժման գլխավոր արժանիքն այն է, որ նա բացահայտեց պրոլետարիատի պատմական դերը և նրան սովորեցրեց լիակատար ինքնագիտակցություն դեպի իր դասակարգային շահերը։ Մարքսը պրոլետարիատի ռևոլյուցիոն թեորիայի մշակումով բաց արեց նոր էտապ հասարակական գիտության պատմության մեջ»[2]։

* * *

Ուսումնասիրելով Շահումյանի վաղ շրջանի (1899—1901 թ. թ.) մարքսիստական հայացքների ձևավորումն ու արտահայտումը, մենք տեսնում ենք, որ Շահումյանի մեջ մարքսիզմը հաղթահարում է մինչմարքսյան դեմոկրատական գաղափարախոսությունները ներքին սուր պայքարի հետևանքով։ Ծանոթանալով Մարքսի, Լենինի, Պլեխանովի աշխատություններին, նա անվերադարձ կերպով կանգնում է մարքս-լենինյան ուսմունքի դիրքերի վրա և հանդիսանում է այդ առաջավոր ռևոլյուցիոն ուսմունքի ականավոր պրոպագանդիստներից մեկը։ Մեր ձեռքի տակ կան շատ փաստաթղ-

[1] Նույն տեղում, էջ 13։

[2] Նույն տեղում։

Թեր, նամակներ, որոնք ցույց են տալիս Շահումյանի հասարակական հայացքների զարգացումը։ Եթե նա 1896—97 թվերին հակվում էր դեպի ազգային դեմոկրատիզմը, ապա 1898 թվին նրա մեջ տեղի է ունենում առաջին բեկումը։ Այդ թվին նա հանդես է գալիս որպես ռևոլուցիոն արաժադրությունների արտահայտիչ։ Նրա մոտ բուրժուական կերպով արտահայտվում է ինտերնացիոնալիզմը և քաղաքական պայքարի պահանջը տիրող բռնակալական կարգերի դեմ։ Եթե հայ բուրժուական և պահպանողական նացիոնալիզմը 1900 թվին տարված էր միայն հայերի որոշ արտոնություններով Անդրկովկասում, իսկ ուշադրության կենտրոնը Թյուրքահայաստանն էր, երբ Թյուրքահայաստանի «փրկության» համար կովկասահայությանը գցում էին և՛ ավելի գաղութային պայմանների մեջ հանուն այն բանի, որպեսզի ցարիզմը իր «գթության» տակն առներ Թյուրքահայաստանում հայկական «ինքնավար» պետության ստեղծման պահանջը, ապա պատանի Շահումյանը, հայկական այդ նացիոնալիզմի ոոմանտիզմին ու իդեական աղջամուղջին դերի չդարձավ։ Նա իր բնական դատողությամբ գտնում էր, որ հայ ժողովրդի ազատագրական պայքարը ինչպես Անդրկովկասում, այնպես և Թյուրքահայաստանում, պետք է կապված լինի մի ընդհանուր պայքարի հետ։ Հայ ժողովրդի ազատագրման բախտը Շահումյանը կապում էր ողջ Ռուսաստանում դեմոկրատական կարգերի հաստատման հետ։ Շահումյանը 1899 թ. իր նամակներից մեկում գրում էր իր ընկերոջը (Մ. Վարդումյանին), որ հայ ժողովրդի տառապանքներին վերջ կլինի միայն այն ժամանակ, երբ նրա երդվյալ ազգասեր պաշտպանները հասարակական ասպարեզից չքանան։ Երբ Արաքսի այս և այն ափի հայերը, միացած Կովկասի տառապյալ ժողովուրդների հետ, հանդես կգան ընդհանուր թշնամու դեմ։ Հայտնի էր արդյոք այդ ժամանակ (1899 թ.) Շահումյանին՝ «Կոմունիստական մանիֆեստի» թարգմանության կապակցությամբ Էնգելսի գրած նամակը մեզ համար մինչև այժմ պարզված չէ։ Էնգելսի նամակի մասին Շահումյանը խոսում է միայն 1902 թվին։ Բայց մեզ հայտնի է, որ 1898—99 թ. թ. Շահումյանը սկսում է ծանոթանալ մարքսիստական գրականությանը, իսկ 1900 թվից նա արդեն լայն չափով ձեռնարկում է մարքսիզմի թեորիական ուսումնասիրությանը և նույն տարում հանդես է գալիս որպես մարքսիզմի պրոպագանդիստ։

Շահումյանի վաղ շրջանի երկերում աչքի է զարնում երեք հիմնական հանգամանք՝ թեմատիկայի բազմազանություն, մարքս-լենինյան սեզբունքայնություն և մարքսիզմի ստեղծագործական կիրառում հայկական իրականության մեջ։

Շահումյանի վաղ շրջանի երկերում ուշագրավ է այն, որ նա խորը կերպով է ուսումնասիրել և ըմբռնել մարքսիզմի կլասիկների աշխատությունները։ Նա հանդես է գալիս որպես բազմակողմանի կրթված մարքսիստ, լավ տիրապետում էր ռուս գրականությանն ու պատմությանը։ Նրա ռևոլուցիոն հայացքների ձևակերպման վրա լուրջ ազդեցություն են ունեցել ռուս դեմոկրատներ Բելինսկին, Չերնիշևսկին, Դոբրոլյուբովը և հայ ռևոլուցիոն-դեմոկրատ Միքայել Նալբանդյանը։ Նա լավ գիտեր նաև եվրոպական գրականությունը և իմացությունների արդեն լուրջ պաշարով

սկսեց ուսումնասիրել մարքսիզմ-լենինիզմը, դառնալով նրա նշանավոր տեսաբաններից և գործիչներից մեկը։

Ստեփան Շահումյանը եղել է ընկեր Ստալինի մերձավոր զինակիցներից մեկը։ Ընկեր Ստալինի անմիջական օգնությամբ ու ցուցումով Շահումյանը 20-րդ դարի շեմքին հիմք է դնում լենինյան ուղղության մամուլի հայերեն լեզվով հրատարակմանը, որն իրականացավ միայն 1902 թ.։

Շահումյանի վաղ շրջանի անտիպ ձեռագրերի մեջ մենք հայտաբերել ենք մի շարք գործեր, որոնք վերաբերում են հայ իրականությանը։

Այսպես, օրինակ, 1899 թ. ծանոթանալով Լենինի, Պլեխանովի մի շարք աշխատությունների նարոդնիկության բնութագրման հարցում, Շահումյանը Լենինի դիրքերից քննադատության է ենթարկում նարոդնիկական հայացքները հայ իրականության մեջ։ Մ. Վարդումյանին գրած իր նամակներից մեկում նա այն միտքն է հայտնում, թե գյուղացիական մասսան համատարած աղքատությունից ու կարիքից կարող է ազատվել միայն այն ժամանակ, երբ միավորված կլինի հանրային գյուղացիական ընկերությունների մեջ, և գրում է. «Ոչ թե ընկերության, որտեղ դարձյալ պետք է տիրեն մասնավոր շահը և ձգտումները, ոչ այնպիսի ընկերության, որպիսին պահանջում էին ռուսական և նրան կողմնակից հայ նարոդնիկությունը, այլ այնպիսի ընկերության, որտեղ հարային սեփականությունը անձեռնմխելի պետք է լինի, որին օգնում է ու ղեկավարում դեմոկրատական պետությունը, մի պետություն, որը հիմնված կլինի նույն հանրային սեփականության հիմքի վրա»։[1]

Շահումյանի կազմած մի այլ կոնսպեկտում, որը վերաբերում է նարոդնիկական հայացքներին, մենք հանդիպում ենք հետաքրքրական դիտողությունների հայ իրականության մասին։ Շահումյանը բնութագրում է հայ հասարակական հոսանքները և ընդհանուր գիծ է անցկացնում նարոդնիկների և հայ հասարակական որոշ պարտիաների միջև, գլխավորապես նշում է «Հնչակյան» պարտիան։ Շահումյանը հնչակյաններին համարում է մանրբուրժուական պարտիա, և որոշ նմանություն է տեսնում նարոդնիկների ու հնչակյանների միջև։

Շահումյանը գրում է. «Հայ հնչակյանները իրենց կազմավորման շրջանում կրել են ռուսական նարոդնիկական ազդեցությունը։ Այդ բացատրվում է նրանով, որ հնչակյանները անձնական ծանոթություն են ունեցել ռուս հայտնի նարոդնիկ գործիչների հետ։ Հնչակյան ծրագրում կան շատ կետեր, որոնք կրկնում են նարոդնիկական հայացքները, այսպես, օրինակ, «սոցիալիզմի» մասին։ Եթե նարոդնիկները հենվում էին գյուղական համայնքի վրա, ապա հնչակյանները հենվում էին մանր արհեստավորների քարգահների գոյության վրա»։

[1] Շահումյանի այս խոսքերը վերցված են Վարդումյանի նամակի պատասխանից Շահումյանին, որտեղ Վարդումյանը մեջբերում է անում Շահումյանից։ Իսկ Շահումյանի գրած նամակը Վարդումյանին դժբախտաբար անհետ կորել է։ Վարդումյանը չի համաձայնում Շահումյանի հետ. նա դեմ է գյուղի սոցիալիստական վերափոխմանը, չնայած որ ինքն ասում է, թե «Աշխատավոր գյուղացուն կալվածատերից ազատագրելու համար մարտիկ կդրվի ազատագրական պայքարին»։ ՏԼՈւ Պարտ. Արխիվ. Ֆ. № 7. գ № 1։

[2] Պարտ. Արխիվ, Ֆ. № 7, գ № 13, թերթ 3։

Միևնույն ժամանակ Շահումյանը խոշոր տարբերություն է տեսնում նարոդնիկների և հնչակյանների միջև։ Գլխավոր տարբերությունը, ըստ Շահումյանի, այն էր, որ 70–80-ական թվականների ռուսական նարոդնիկությունը անհաշտ պայքար էր մղում ցարիզմի դեմ, իսկ հայ նարոդնիկները և հնչակյանները ցարիզմի դեմ չեն ըմբոստացել։ Նրանք չեն խոսել, չեն դրել ռուսական դեսպոտիզմի, դաղութային և ազգային ճնշումների դեմ։ Հնչակյանների ամբողջ միտքը և իդեան Թյուրքահայաստանն է եղել։

«Հնչակյան պարտիան, — գրում է Շահումյանը, — հայ մանր բուրժուազիայի իդեաների արտահայտիչն է։ Նա խոսում է «սոցիալիզմի» մասին այնքանով, որքանով այդ հարկավոր է մասսաների մեջ համակրանք վայելելու և ցույց տալու, որ ահա, տեսեք, մենք էլ «սոցիալիստ» ենք։ Բայց հնչակյան սոցիալիզմը գիտական ոչ մի հիմք չունի, նրանք ցանկանում են սոցիալիզմը հարմարեցնել նացիոնալիզմին»։[1]

Նացիոնալիստական պարտիաների ազատագրական «պայքարը», ըստ Շահումյանի, հայ ժողովրդի ազատագրական պայքարը չէր, «այլ «ազատության» քողի տակ պաշտպանվում էր հայ բուրժուազիայի կապիտալների ազատությունը։ Նրանք, որպես բուրժուական իդեոլոգներ, ճանապարհ էին հարթում հայ բուրժուազիայի համար դեպի արևելյան շուկան։ «Դրա համար հարկավոր եղավ առաջ քաշել հայոց հարցը՝ Թյուրքահայաստանում «ինքնավարություն» հաստատելու պահանջով։ Այդ ինքնավարությունը և ազատությունը իսկական տանջված ժողովրդի ազատությունը չէր, բայց բուրժուազիային հարկավոր էր օգտագործել մասսաներին, գրավել իր դրոշի տակ, և իր իդեոլոգիան փաթաթել նրանց վզին։ Դրա համար հարկավոր էր հայ հետամնաց մասսային թունավորել նացիոնալիզմի թույնով և մթագնել նրա գիտակցությունը՝ հանուն ազգային անկախության պահանջի»։[2]

Շահումյանի այս կարգի հարցադրումը և բնութագրումը զարգացում է գտնում նրա հետագա աշխատությունների մեջ («Ազգային հարցը Ռուսաստանում», 1906 թ., «Ռևոլուցիոն սոցիալ-դեմոկրատիան և ազգային հարցը», 1914 թ., և այլ աշխատությունները), որոնց մասին մենք այս հոդվածում չենք խոսի։

Նման կարգի գնահատականի մենք հանդիպում ենք նաև «Մշակի» (հայ լիբերալների) մասին։ Շահումյանը մշակականներին համարում է հայ առևտրական և արդյունաբերական բուրժուազիայի արտահայտիչ և ցարիզմի հլու գործիք ու հենարան՝ կովկասահայության մեջ։ Շահումյանը մերկացնում է հայ լիբերալներին այն բանում, որ նրանք շաղակրատում են որպես ռուս ռևոլուցիոն դեմոկրատների հետևորդներ։ Սակայն իրականում, ըստ Շահումյանի, մշակականները գովերգեցին ցարիզմը, նրա «հայրական հոգատարությունը դեպի հայ ազգը»։ «Հայ լիբերալիզմը խոսքով դեմոկրատիայի կողմնակից էր, բայց գործնականում, իրենց մամուլում և պլատֆորմայում՝ ոչ մի խոսք դեմոկրատիայի մասին։ Նրանք երբեք բացասական դիրք չեն բռնել դեպի ցարիզմը, դեպի նրա գաղութային քաղաքականու-

1 Տարա. Արխիվ, ֆ. № 7, գ. № 3, էջ 4–5
2 Նույն տեղում։

թյունը, իսկ ռուսական դեմոկրատները անհաշտ էին դեպի ցարիզմը, նրանք անհաշտ պայքարի դուրս եկան ճորտատիրության դեմ։ Նրանք ոգևորեցին լեգալ և անլեգալ մամուլը իրենց հայացքների տարածման համար, միապետության դեմ պայքարի կազմակերպման համար, իսկ հայ լիբերալիզմը ծունկ է չոքել և աղոթում է բռնակալի առողջության համար»[1]։

Շահումյանի այս գնահատականը ավելի լայն ու հիմնավորված կերպով արտահայտում է 1902 թ., Ղ. Աղայանի հոբելյանին նվիրված ճառ-կոչում, որը տպվել է հեկտոգրաֆով[2]։

1899 թվից Ստեփան Շահումյանը հանդես է գալիս մարքս-լենինյան գաղափարախոսության պաշտպանի դերում։ Նա մերկացնում է մարքսիզմի ռեվիզիոնիստներին, բուրժուական մտածողներին, որոնք ամեն կերպ աշխատում էին մարքսիզմը հարմարեցնել բուրժուական իդեոլոգիային։ Ինչպես վերը նշեցինք, Շահումյանը մարքս-լենինյան դիրքերից խիստ քննադատության է ենթարկում հայ բուրժուական նացիոնալիստական իդեոլոգիան։ Նա հայկական հասարակական հոսանքները առաջադիմական դեմոկրատական չի համարում, այլ նրանց բնութագրում է որպես հայ բուրժուազիայի արտահայտիչներ։ Հայ նարոդնիկական, մանր-բուրժուական իդեոլոգներին համարում է հետամնաց ու տգետ։ «Նրանք չէին հասկանում այժմեական դեպքերի իմաստը այն պատճառով, որ հետամնաց էին հասարակական երևույթների ըմբռնման մեջ։ Հայ «սոցիալիստական» հոսանքները ոչ մի սոցիալիստական գույն չունեին, այլ պարզապես նացիոնալիզմ էր, այն էլ ամենավտանգավոր ու վնասակար նացիոնալիզմը, որը վարագուրվում էր «սոցիալիստական» փետուրներով»։

Շահումյանը կետ առ կետ քննադատում է հայ լիբերալներին, հնչակյաններին, դաշնակցությանը և մերկացնում է նրանց բուրժուա-նացիոնալիստական բնույթը, նա տալիս է մի շարք հիմնական հարցերի ճիշտ մարքսիստական մեկնաբանությունը։ Այսպես, օրինակ, նրա վաղ շրջանի աշխատություններում (1899—1900 թ.թ.) մենք ակնհայտ տեսնում ենք ազգային հարցի և դասակարգային պայքարի, ինտելիգենցիայի և ժողովրդի, ազատության և անհրաժեշտության մասին սքանչելի մարքսիստական-մատերիալիստական մեկնաբանումներ։ Ազգային հարցի մասին խոսելիս (1899 թ.) Շահումյանն ասում է. «Ազգային հարցը մեր հայ ազգայնականների մոտ դարձել է ապրուստի միջոց, առևտրի առարկա։ Մեր «ազգասերները» ցանկանում են ազգային հարցը թեորիականորեն բացատրել, բայց այստեղ նրանք ցույց են տալիս իրենց սնանկացումը։ Բուրժուական ազգային քաղաքագետները ազգը դուրս են թողնում դասակարգային հասկացողություններից։ «Ազգը,—ասում է Շահումյանը,—դուրս չէ դասակարգերի հասկացումից և նա երբեք ինքնամփոփ չի կարող լինել, ազգային հարցը հասարակական-դասակարգային հարց է»[3]։

Ամփոփելով Շահումյանի վաղ շրջանի (1898—1900 թ.թ.) մարքսիստական հայացքների կազմավորման համառոտակի ակնարկը, մենք գալիս

[1] Նույն տեղում։
[2] Պարտ. Արխիվ, ֆ. № 7, գ. 3։
[3] Նույն ֆոնդ, տետր № 3, էջ 8։

ենք հետեւյալ եզրակացությունը՝ Շահումյանի հասարակական-քաղաքական հայացքների ձեւակերպումը անցել է ներքին ուր պայքարով։ Նա միանգամից չէ, որ մարքսիստ է դարձել։ Մինչեւ մարքսիզմի բանակն անցնելը նրա վրա ազդեցություն են ունեցել ազգային-դեմոկրատական գաղափարները։ Սակայն այդ ազգային դեմոկրատիզմը նրա մոտ հանդես է եկել յուրահատուկ երանգով, այն է՝ հայ ժողովրդի ազատագրման և երկրի քաղաքական կարգերի լիակատար դեմոկրատացման պահանջով։ Շահումյանի դեմոկրատիզմը Չերնիշևսկու, Բելինսկու և Մ. Նալբանդյանի ռեվոլուցիոն դեմոկրատիզմն էր, սակայն 1897—98 թ.թ. քաղաքական դեպքերի զարգացումը նրա մեջ մտցնում է նոր բովանդակություն։ Նա ազգային-ազատագրական շարժման հարցը կապում է կովկասյան բոլոր ժողովուրդների ազատագրական միասնական պայքարի հետ։

1896—97 թ.թ. Շահումյանն ուսումնասիրելով մինչմարքսյան կլասիկ փիլիսոփայությունը, արտահայտում էր դուալիստական հայացքներ։

1898 թիվը հանդիսացավ Շահումյանի հասարակական հայացքների բեկման տարի։ Զեռնամուխ լինելով մարքսիստական գրականության ուսումնասիրմանը, նա լուրջ ու արժատական բեկում է ապրում և կանգնում է հետեւողական մարքսիստական ուսմունքի դիրքերի վրա, հանդես է գալիս ու պաշտպանում մարքսիզմը բուրժուական հարձակումներից։ Շահումյանի մարքսիստ դառնալու գործում լուրջ և նշանակալից ազդեցություն ունեցավ այն հանգամանքը, որ նա կապվեց վրաց մարքսիստների հետ։ Իսկ ռուսական ռեվոլուցիոն միջավայրը նրան կերտեց որպես մարտնչող հետեւողական մարքսիստ։ Մարքսիստական գրականության ուսումնասիրությունը և պրոպագանդիստական աշխատանքը, իսկ հետագա տարիներին (1900—1905 թ.թ.) ընկեր Ստալինի հետ համատեղ աշխատանքը Շահումյանին դարձրին մարքս-լենինյան ականավոր գործիչ։